ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հարգելի՛ շահառու,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի շրջանակներում Երևան քաղաքի Ադոնցի փողոցի N 6 հասցեում կառուցված բազմաբնակարան շենքային համալիրի մասնաշենքերի էլեկտրաէներգիայի մատակարարումն ապահովելու և բնակիչների բաժանորդագրման գործընթացն իրականացնելու համար անշարժ գույքի առուվաճառքի նախնական պայմանագրերի հիման վրա կարող եք դիմել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության բաժանորդների սպասարկման կենտրոններ: Հետագայում անշարժ գույքի առուվաճառքի հիմնական պայմանագիրը կնքելուց և տվյալ պայմանագրից ծագող իրավունքները ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում պետական գրանցման ենթարկելուց հետո, խնդրում եմ համապատասխան անշարժ գույքի սեփականության վկայականը հնարավորինս սեղմ ժամկետում ներկայացնել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերություն:

Միաժամանակ տեղեկացնում ենք Ձեզ, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերության բաժանորդ դառնալու գործընթացում խոչընդոտներ առաջանալու դեպքում կարող եք դիմել ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

Հարգանքով՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե